Յոթերորդ հաղորդում

## Նա, ով ձևավորվում է հավատացյալների մեջ

Գրվածքների ընթերցում. Գղտ 1:15-16, 2:20, 3:29, 4:5, 19, Եփս 3:17ա, Բ Կրթ 3:18, Հռմ 8:29, 12:2ա

**I. Նոր Կտակարանը բացահայտում է, որ Քրիստոսը խորապես կապված է մեր ներքին էության հետ և ցանկանում է մեզ հետ սուբյեկտիվ փոխհարաբերություններ ունենալ՝ Գղտ 1:15-16, 2:20.**

Ա. Աստված բացահայտել է Իր Որդուն Պողոսին և մեզ՝ 1:15-16.

1. «Բացահայտել» բառը Գղտ 1:16-ում շատ հանգուցային է ու չափազանց մեծ կարևորություն ունի:
2. Բացահայտել նշանակում է հայտնի անել (հրապարակել) կամ բացահայտորեն ցույց տալ (ի ցույց դնել) մի բան, որ գաղտնի է պահվել:
3. Նոր Կտակարանում «բացահայտել» բառն (իր տարբեր ձևերով) շատ խոր կերպով օգտագործվում է մեր հոգու առնչությամբ՝ Հռմ 1:17, 8:18, Ա Կրթ 2:10, Ա Պտ 1:5, 5:1:
4. Աստծու՝ մեզ Իր Որդուն բացահայտելը տեղի է ունենում մեր մեջ. Նա դա ոչ թե արտաքուստ է անում, այլ ներքուստ. ոչ թե արտաքին տեսությամբ, այլ տեսնելու ներքին ընդունակությամբ:
5. Աստծու սրտի ցանկությունը մեր մեջ Իր Որդուն բացահայտելն է, որպեսզի մենք ճանաչենք Նրան, ընդունենք Նրան՝ որպես մեր կյանքի, (Հվի 17:3, 3:16) և Աստծու որդիներ դառնանք (1:12, Գղտ 4:5-6):

Բ. Գղտ 2:20-ում տեսնում ենք Աստծու տնտեսության ամենահիմնական ճշմարտությունը՝ այլևս ոչ թե ես եմ ապրում, այլ Քրիստոսն է ապրում իմ մեջ.

1. Երբ Քրիստոսը խաչվեց, մենք, Աստծու տնտեսության համաձայն, Նրա մեջ էինք ընդգրկված. սա կատարված փաստ է՝ Հռմ 6:6, Գղտ 2:20, 6:14:
2. Մենք մեռել ենք օրենքի համար և ապրում ենք Աստծու համար Քրիստոսի հետ օրգանական միության միջոցով՝ Հվի 15:4-5, Ա Կրթ 6:17, Հռմ 12:4-5, Ա Թսղ 1:1:
3. Գղտ 2:20-ում «ես»-ը վերաբերում է ոչ միայն Պողոսին, այլև մեզնից յուրաքանչյուրին, և Պողոսի վկայությունը նաև մեր վկայությունն է.
   ա. «Քրիստոսի հետ խաչված եմ»՝ խ. 20ա:
   բ. «Այլևս ոչ թե ես եմ ապրում, այլ Քրիստոսն է ապրում իմ մեջ»՝ խ. 20բ:
   գ. «Այն կյանքը, որը հիմա ապրում եմ մսեղիում, հավատքի մեջ եմ ապրում՝ Աստծու Որդու հավատքի»՝ խ. 20գ:

դ. «....Աստծու Որդու հավատքի, ով ինձ սիրեց և Իրեն ինձ համար տվեց»՝ խ. 20դ:

ե. «Ի՞նչ Քեզնից ինձ կբաժանի./ Սիրում ես Դու ինձ հավետ,/ Քո սերն այնքան գերազանց է,/ Որ Քեզ ձուլում է ինձ հետ:/ Մենք հավիտյան մեկ կլինենք՝/ Ես՝ դարձած Դու, իսկ Դու՝ ես:/ Վկայում եմ, որ Քո սիրով/ Մեկ եմ Քեզ հետ մշտապես:»՝ Օրհներգ 114, 4-րդ տուն:

**II. Քրիստոսը խաչվեց (Գղտ 3:1), որպեսզի մեզ փրկագնի օրենքի անեծքից (խ. 13) և ազատի աշխարհի չար կրոնական հոսքից (1:4), և Նա հարուցանվեց մեռելներից, որպեսզի մեր մեջ ապրի (2:20) և մեր՝ հասունությանը հասնելու ժամանակ մեր մեջ ձևավորվի (4:19):**

**III. Գղտ 4:19-ում Քրիստոսը ներկայացված է որպես Մեկը, ով ձևավորվում է հավատացյալների մեջ.**

Ա. Քրիստոսը, ով կենդանի անձ է, Պողոսի ավետարանի կենտրոնն է՝ 1:16, Հռմ 1:1, 3-4:

Բ. Պողոսի քարոզելն ուղղված էր Քրիստոսին՝ կենդանի Աստծու Որդուն, հավատացյալների մեջ ծնունդ տալուն՝ Գղտ 1:15-16, 2:20, 4:19:

Գ. Քրիստոսը հիմա մեր մեջ է ապրում և ձևավորվելու է մեր մեջ՝ խ. 19:

Դ. Պողոսը ճգնում էր երկունքի ցավերով, որպեսզի Քրիստոսը ձևավորվեր հավատացյալների մեջ նրանց լիակատար որդիության համար՝ խխ. 5, 19:

**IV. Նոր Կտակարանում Պողոսի կողմից «ձև», կամ պատկեր, բառի օգտագործումը վերաբերում է ներքին էության արտաքին արտահայտությանը (Փլպ 2:6). մեր ինչպիսին լինելն արտահայտվում է մեր արտաքին ձևով, այսինքն՝ մեր ներքին էության արտաքին արտահայտության մեջ:**

**V. Քրիստոսը կձևավորվի մեր մեջ, երբ Նա մեր մեջ չափահաս դառնա՝ Գղտ 4:19, Եփս 4:13-16.**

Ա. Նախ՝ Քրիստոսը մեր մեջ ծնվեց, երբ ապաշխարեցինք ու Նրան ներհավատացինք. ապա՝ Նա մեր քրիստոնեական կյանքում մեր մեջ է ապրում (Գղտ 2:20). և ի վերջո՝ երբ հասունության հասնենք, Նա մեր մեջ կձևավորվի:

Բ. Քրիստոսը կձևավորվի մեր մեջ այն ժամանակ, երբ Նրան թույլ տանք թափանցել մեր ողջ էության մեջ և հագեցնել մեր ներքին մասերը՝ 4:19, Եփս 3:17ա, Կղս 3:4, 10-11.

1. Երբ Քրիստոսն այսկերպ զբաղեցնի մեր ներքին էությունը, Նա կձևավորվի մեր մեջ՝ Սղմ 51:6:
2. Մենք պետք է Քրիստոսին թույլ տանք հագեցնել մեր ներքին էության յուրաքանչյուր մասը. Նա պետք է զբաղեցնի ու հագեցնի մեր միտքը, զգացմունքներն ու կամքը՝ Փլպ 2:5, Եփս 3:17ա:
3. Քրիստոսը մեր ողջ էությանը կտիրի այն ժամանակ, երբ ձևավորվի մեր մեջ՝ Գղտ 4:19:

Գ. Որպեսզի Քրիստոսն Իր տունը հաստատի մեր սրտերում, Նա պետք է կարողանա բնակություն հաստատել մեր մեջ, իսկ դրա համար անհրաժեշտ է Քրիստոսին թույլ տալ, որ Նա Իր տունը հաստատի մեր ներքին էության բոլոր մասերում. այսպես Քրիստոսը կձևավորվի մեր մեջ՝ Եփս 3:17ա:

Դ. Քրիստոսը մեր մեջ կձևավորվի այն ժամանակ, երբ մենք թույլ տանք, որ համաբովանդակ Հոգին զբաղեցնի մեր ներքին էության յուրաքանչյուր մասը՝ Գղտ 4:19, 3:2-3, 14.

1. Քրիստոսը պետք է ոչ միայն տարածվի մեր մտքի, զգացմունքների ու կամքի մեջ, այլև փաստացիորեն մեր միտքը զգացմունքներն ու կամքը դառնա՝ Փլպ 2:5, Ա Կրթ 2:16:
2. Քրիստոսից բացի ամեն բան պետք է կրճատվի, իսկ Քրիստոսը պետք է մեր փորձառության մեջ մեզ համար ամեն ինչ դառնա. այսպես Նա մեր մեջ կձևավորվի:

Ե. Քրիստոսը մեր մեջ կձևավորվի այն ժամանակ, երբ միաձուլվի մեր ողջ էության հետ՝ 6:17.

1. Քրիստոսը պետք է մեզ հետ ձուլվի մեր էության յուրաքանչյուր մասում՝ Եփս 4:23:
2. Քրիստոսը պետք է այնքան թափանցի մեր մեջ ու հագեցնի մեզ, մինչև որ լիովին միախառնվի մեզ հետ. այդժամ Նա կձևավորվի մեր մեջ՝ 3:17ա, Գղտ 4:19:

Զ. Հավատացյալների մեջ Քրիստոսի ձևավորվելու մասին Պողոսի ասածը ենթադրում է, որ մենք կազմվում ենք Քրիստոսով՝ Կղս 1:27, 3:4, 10-11.

1. Քրիստոսն ապրում է մեր մեջ, Նա ձևավորվում է մեր մեջ և մեր կազմությունն է դառնում. հիմա Քրիստոսն ապրում է մեր մեջ, որպեսզի մենք օրգանապես կազմվենք Նրանով՝ Գղտ 2:20, Կղս 3:4, 10-11:
2. Վերջնարդյունքում մեր ողջ էությունը կազմված կլինի Քրիստոսի տարրից, որովհետև Նա կդառնա մեր շնչի յուրաքանչյուր մասի կազմությունը, որպեսզի մենք մեր էության յուրաքանչյուր մասում Իր ձևը՝ Իր պատկերն ունենանք՝ Բ Կրթ 3:18, Հռմ 8:29:

Է. «Ձևավորվել» բառը Գղտ 4:19-ում համապատասխանում է Բ Կրթ 3:18-ի «պատկեր» բառին.

1. Քրիստոսն Իր տարրով օրգանապես աշխատում է մեր ներսում, որպեսզի ունենանք Նրա ձևն ու արտահայտենք Նրա պատկերը՝ Հռմ 8:29:
2. Քրիստոսը մեր մեջ ձևավորվում է այն բանի հիման վրա, որ մենք փոխակերպվում ենք Նրա պատկերին՝ Բ Կրթ 3:18:
3. Մեր՝ Նրա պատկերին փոխակերպվելու և Նրա՝ մեր մեջ ձևավորվելու արդյունքում մենք կերպարանակցվում ենք Նրա պատկերին. մեր՝ Նրա պատկերին կերպարանակցվելը մեր մեջ Նրա ձևավորվելու հետևանքն է՝ Գղտ 4:19, Հռմ 8:29:

Ը. Քրիստոսը մեր մեջ է ձևավորվում այն ժամանակ, երբ մեր շնչի երեք մասերը՝ մեր միտքը, զգացմունքն ու կամքը, նորոգվում են՝12:2ա, Եփս 4:23.

1. Որպեսզի մեր միտքը, զգացմունքն ու կամքը նորոգվեն, Քրիստոսը պետք է հագեցնի մեր միտքը, զգացմունքն ու կամքը և Իրենով փոխարինի «ես»-ն ու աշխարհը մեր շնչում՝ Հռմ 12:2ա:
2. Եթե այսկերպ նորոգվենք, մեր էության յուրաքանչյուր մասը կկրի Քրիստոսի պատկերը՝ Բ Կրթ 3:18, Հռմ 8:29:

**VI. Քրիստոսը պետք է մեր մեջ ձևավորվի, որպեսզի մենք չափահաս որդիներ ու Աստծու կողմից խոստացված օրհնությունը ժառանգող ժառանգորդներ լինենք և որպեսզի աստվածային որդիության մեջ հասունության հասնենք՝ Գղտ 3:14, 26, 29, 4:5-6.**

Ա. Գղտ 3:26-ում ասվում է. «Դուք բոլորդ Աստծու որդիներ եք Քրիստոս Հիսուսի հանդեպ հավատքի միջոցով». «Աստծու որդիներ» արտահայտությունը վերաբերում է չափահաս որդիներին:

Բ. Աստծու ընտրյալ մարդիկ հին կտակարանում մանուկներ էին համարվում. հիմա՝ նոր կտակարանում, նրանք չափահաս որդիներ են համարվում, ովքեր ժառանգելու են խոստացված օրհնությունը՝ Քրիստոսի համաբովանդակ Հոգուն:

Գ. Քրիստոսը պետք է մեր մեջ հասունության հասնի, որպեսզի մենք ժառանգորդներ լինենք՝ Եռամեկ Աստծու՝ որպես մեր ժառանգությանը, լիարժեքորեն վայելելու համար. Սուրբ Հոգին մեր ժառանգության գրավն է՝ Եփս 1:13բ-14, Ա Պտ 1:4:

Դ. Մենք պետք է աղոթենք, որ Տերը մեզ բերի Քրիստոսին փորձառաբար ապրելու և Քրիստոսին վայելելու մեջ՝ Նրա, ով ծնվել է մեր մեջ, ով հիմա ապրում է մեր մեջ, և ով կձևավորվի մեր մեջ, երբ մենք հասունության հասնենք, որպեսզի չափահաս որդիներ ու Աստծու խոստացած օրհնությունների ժառանգորդները լինենք և որպեսզի աստվածային որդիության մեջ հասունության հասնենք՝ Գղտ 3:29, 4:6, 19:

© 2024 Living Stream Ministry